Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2025 թ. սեպտեմբերի -ի -Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության **աշխատանքների իրականացման ծավալների կտրուկ ավելացմամբ պայմանավորված՝** անհրաժեշտություն է առաջացել պայմանագրային հիմունքներով ներգրավել համապատասխան փորձագետ:

2. ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1) Բարձրագույն կրթություն.
2) հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ քաղաքաշինության կամ ճարտարագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ.
3) քաղաքաշինության բնագավառում աշխատանքային փորձ.
4) հաշվետվությունների և այլ փաստաթղթերի հետ աշխատելու փորձ.
5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, տիրապետում է ռուսերեն կամ անգլերեն լեզուներին (գերազանց):

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է **վեց** ամիս ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետը վեց ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

ա) իրականացնել մարզային ենթակայության կրթական հաստատությունների շենքերի, մշակութային և սպորտային կազմակերպությունների կառուցման, պահպանման ու շահագործման աշխատանքների ուսումնասիրություն, ինչպես նաև մարզային ենթակայության առողջապահական, սոցիալական պաշտպանության հաստատությունների շենքերի կառուցման, պահպանման ու շահագործման աշխատանքների ուսումնասիրություն.

բ) իրականացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի /**այսուհետ՝ Մարզ**/ համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքները.

գ) իրականացնել Մարզի համայնքների միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման կազմակերպչական աշխատանքները.

դ) Մարզի համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների շրջանակներում մասնակցել Մարզի համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ եզրակացությունների կազմման գործընթացին վերաբերվող աշխատանքներին.

ե) իրականացնել Մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմման աշխատանքները.

զ) քաղաքաշինության բնագավառում իրականացնել վերահսկողություն Մարզի տարածքում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ.

է) իրականացնել Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի նախապատրաստական աշխատանքները.

ը) իրականացնել քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների ուսումնասիրություն և համապատասխան ընթացքի ապահովումը.

թ) իրականացնել Մարզի համայնքների ղեկավարներից ստացված շինարարության թույլտվությունների օրինականության ստուգում ընտրանքային կարգով և հաշվառման աշխատանքներ.

ժ) իրականացնել միջնաժամկետ ծախսային ծրագրի մշակում.

ժա) իրականացնել Մարզում իրականացվող հիմնանորոգման աշխատանքների ընթացքի վերահսկումը.

ժբ) իր լիազորությունների շրջանակում աջակցել Մարզի համայնքների ղեկավարների կողմից գերեզմանատների գործունեության հետ կապված աշխատանքներին.

ժգ) մասնակցել Մարզի տարածքում իրականացվող պետական ծրագրերով ավարտական շինարարական աշխատանքների ընդունող հանձնաժողովի աշխատանքներին.

ժդ) հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում իրականացնել քաղաքաշինական գործունեության նպատակով համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողհատկացումների առաջարկությունների համաձայնեցում և օրենսդրությամբ նախատեսված դեպքերում առաջարկությունների վերաբերյալ կազմել եզրակացություններ.

ժե) ներկայացնել Մարզի համայնքներից ստացված Մարզի տարածքում քաղաքաշինական հատուկ կարգավորման գոտիներում կառուցապատման վերաբերյալ առաջարկություններ, տալ դրանց վերաբերյալ եզրակացություններ:

2) Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

5. **Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետներ**

Փորձագետը երեք ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություններ:

6. **Աշխատանքի գնահատման չափանիշներ**

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և ամփոփիչ փուլ:

Աշխատանքը գնահատվում է երեք ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշերը սահմանվում են ըստ 4-րդ բաժնի 1-ին կետի՝ «ա»-«ժե»-ը ենթակետերով սահմանված արդյունքների: Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշերն են՝

ա) մարզային ենթակայության կրթական հաստատությունների շենքերի, մշակութային և սպորտային կազմակերպությունների կառուցման, պահպանման ու շահագործման աշխատանքների ուսումնասիրությունը, ինչպես նաև մարզային ենթակայության առողջապահական, սոցիալական պաշտպանության հաստատությունների շենքերի կառուցման, պահպանման ու շահագործման աշխատանքների ուսումնասիրությունն իրականացված են.

բ) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի /**այսուհետ՝ Մարզ**/ համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքներն իրականացված են.

գ) Մարզի համայնքների միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման կազմակերպչական աշխատանքներն իրականացված են.

դ) Մարզի համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների շրջանակներում Մարզի համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ եզրակացությունների կազմման գործընթացին վերաբերվող աշխատանքներին մասնակցությունը պատշաճ կատարված է.

ե) Մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմման աշխատանքներն իրականացված են.

զ) քաղաքաշինության բնագավառում Մարզի տարածքում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացված է.

է) Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի նախապատրաստական աշխատանքներն իրականացված են.

ը) քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների ուսումնասիրությունը և համապատասխան ընթացքի ապահովումն իրականացված է.

թ) Մարզի համայնքների ղեկավարներից ստացված շինարարության թույլտվությունների օրինականության ստուգումն ընտրանքային կարգով և հաշվառման աշխատանքներն իրականացված են.

ժ) միջնաժամկետ ծախսային ծրագրի մշակման աշխատանքներն իրականացված են.

ժա) Մարզում իրականացվող հիմնանորագման աշխատանքների ընթացքի վերահսկումն իրականացված է.

ժբ) Մարզի համայնքների ղեկավարների կողմից գերեզմանատների գործունեության հետ կապված աշխատանքներին աջակցումն իրականացված է.

ժգ) Մարզի տարածքում իրականացվող պետական ծրագրերով ավարտական շինարարական աշխատանքների ընդունող հանձնաժողովի աշխատանքներին մասնակցությունը պատշաճ կարգով կատարված է.

ժդ) հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության նպատակով համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողհատկացումների առաջարկությունների համաձայնեցման աշխատանքներն իրականացված են և օրենսդրությամբ նախատեսված դեպքերում առաջարկությունների վերաբերյալ եզրակացությունները կազմված են.

ժե) Մարզի համայնքներից ստացված Մարզի տարածքում քաղաքաշինական հատուկ կարգավորման գոտիներում կառուցապատման վերաբերյալ առաջարկությունները ներկայացված են, դրանց վերաբերյալ եզրակացությունները տրված են:

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2025-09-15 15:26:00 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ